


իրենց ստորագրութիւններով վաւերացրած, ինչպէս մեր ձեռքն հասած Հայոց նամակն է, կամ Բարգէնի Ա. թուղթը: Այդ հասկանալի պատճառով էլ Հայոց նամակում չեն յիշատակուած Վրաց և Աղուանից եպիսկոպոսների անունները, ինչպէս և նրանց տուած թղթերում չէին լինի Հայոց եպիսկոպոսների անունները:

Այդպիսով մենք ինդիրը համարում ենք վերջնականապէս պարզուած և անփիճելի կերպով ապացուցուած:

Հայոց Բարգէն կաթուղիկոսը, մեզ հասած բոլոր պղբերների տուած տեղեկութիւնների համաձայն, գումարել է միայն Մի ԺՈՂՈՎ ԳՈՒԻՆՈՒՄ, և ոչ մի ժողով Վաղարշապատում. իսկ այդ միակ ժողովը կայացել է անկասկած 506 ԹՈՒԱՍԿԱՆԻՆ Վրաց և Աղուանից մասնակցութեամբ, և այն ժողովը է, որ յիշուած է նաև Աբրահամ կաթուղիկոսի Գ. թղթի մէջ առ Վրաց Կիւրիան կաթուղիկոսը:

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆՅ

26 Յունիսի 1908.



### ՏԻՄՈԹԷՈՍ ԿՈՒԶԻ ՄԱՍԻՆ

### Լրացուցումն եւ ուղղելիք

Արարատում տպած յօդուածումս (համար Մայիս—Յունիս) կարևոր եմ համարում ուղղել հետևեալները.

1. Էջ 572, տող 3, «552—556 քառամեակին» պիտի լինի «552—555 քառամեակին», ինչպէս որ է մի քանի տող ներքևում (Արատապութեան մէջ արգէն ուղղուած):

2. Էջ 576, տող 13, «25, 29 կամ 30 օգոստոսի» պիտի լինի «24, 29 կամ 30 օգոստոսի». (արտատպ. ուղղուած):

3. Էջ 587—588, § 21, (արտատպ. էջ 27, տող 1—6), պիտի դուրս ձգուին հետևեալ 6 տողերը, «Այս սահմանը կարելի է աւելի ևս սեղմել—վաթսունական թուերին»: Այստեղ տեղի է ունեցել աւելի կոպիտ թիւրիմացութիւն,

շիտթուել են Գեննատիոս պատրիարքն և Գեննատիոս Մարտէլլցին: Վերջինիս է վերագրուում Տիմոթէոսի լատին թարգմանութիւնը (հինգերորդի վերջերին). իմ ձեռքի տակ եղած շատ անբաւարար աղբիւրներից քաղում եմ հետևեալը. Ses frères le prièrent de traduire encore l'ouvrage de Timothée Elure, adressé à l'empereur Léon, contre le concile de Chalcedoine, Gennade, en mettant cet écrit en latin, eut soin d'en faire remarquer les erreurs և այլն. (Nouv. Encyclopéd. Théol. dic. de Patrolog. publ. par M. l'abbé Migne.) Այս սրբագրութիւններով իմ եզրակացութիւնները չեն փոխուում և մնում են նոյնը:

4. Շատերին շիտթում է այն հանգամանքը, որ հինգերորդ և վեցերորդ դարերից չունինք մինչև այժմս որ և է ուրիշ օրինակ ոչ ամսի՝ այլ ամսաթուի զուգաւորութեան՝ մեզ հասած ուղղակի, և ոչ թէ աւելի նորագոյն պատմիչների միջնորդութեամբ: Վերջիններիս ցուցումները կարող են լինել քիչ թէ շատ յաջող կամ անյաջող յետադարձ հաշիւներ: Բայց այս հանգամանքը պէտք է բացատրել, ըստ իմ կարծեաց, միմիայն այն բանով, որ ժամանակաբանական տեսակէտից լաւ կամ գրեթէ բնաւին չեն ուսումնասիրուած մեր մատենագրութեան առաջին երկու դարերը: Յամենայն դէպս «Տիմոթէոսի» ամսաթուի զուգաւորութիւնը միակը չէ: Շուտով առիթ կունենամ նոյնպիսի զուգաւորութեան վրայ հիմնուած ապացուցանել, որ Եւսեբիոսի Եկեղեց. Պատմութեան հայ թարգմանութիւնը ասորականից կատարուած է որոշ քառամեակում, Մաշտոց Մեսրոպի կենդանութեան ժամանակ, որով և լիովին արդարանում է Խորենացու պահած տեղեկութիւնը, թէ «վկայ քեզ ի մօտոյ երաշխա օրեսցէ Եկէսիաստէ գիրք Եւսեբի Կեսարացոյ, զորս ևս թարգմանել երանելի վարդապետն Մաշտոց ի հայ լեզու» (Բ., 10): Աւելորդ եմ համարում ուրիշ աւելի մանր ինքն ըստ ինքեան հասկանալի ապագրական վրիպակները ուղղել, շարուածքի տառերի մաշուածութիւնն անհնարին է դարձնում լաւագոյն սրբագրութիւնը (օրին. չորս = չորս և նմաններ):

Յուլիս, Էջմիածին

Գալուս Տէր Մկրտչեան